Տ Ա Ր Ե Կ Ա Ն Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի
2020 թ. գիտական հետազոտությունների և գիտակազմակերպչական գործունեության
հիմնական արդյունքների մասին

1. **ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի 2020 թ. գործունեության կարևորագույն արդյունքներից են՝**

«Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ-3» գիտական թեմայի /ղեկ.՝ պ.գ.թ. Արմեն Հայրապետյան/ շրջանակներում՝

ա. Ջրափիի դամբարանադաշտերի փրկարարական պեղումները, չնայած փոքր ծավալին, նոր նյութեր տվեցին Ախուրյանի ափամերձ տարածքներում վաղ երկաթի ժամանակաշրջանում բնակավայրերի տեղադրության ընդհանուրության, բնակավայր-դամբարանադաշտ հարաբերակցության, բնակչության խտության, տնտեսական բարձր մակարդակի, Հայաստանի համաժամանակյա այլ հուշարձանների հետ թաղման ձևերի, ծեսի, նյութական ու հոգևոր մշակույթի ընդհանրության ուսումնասիրության համար:

բ. Լեռնակերտի պեղումներից ձեռք բերված կենդանաբանական տվյալների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Ք.Ա. III-I հազարամյակներում տարածաշրջանի տնտեսության զարգացած ճյուղերից մեկն անասնապահությունն էր: Հայտնաբերված նյութը տեղեկություններ է հաղորդում ինչպես Լեռնակերտի հին հանրույթների սննդային կազմի, այնպես էլ տվյալ ժամանակահատվածում տնտեսության տարբեր ճյուղերի զարգացվածության մասին (կաշեգործություն, մանածագործություն և կաթնամթերքի վերամշակում նն):

գ. Կատարվեց թուրքական զորքերի դեմ 1918թ. մայիսին Արևելյան Շիրակի գյուղերում ծավալված դիմադրական պայքարի պատմության քննություն, լուսաբանվեց գոյապայքարի դերը Մայիսյան հերոսամարտերի պատմության մեջ: Տեղացիներից, արևմտահայ կամավորներից ու փասխտականներից ձևավորված ճակատը թուլացրեց դեպի Սարդարապատ շարժվող թուրքական զորքերի թիկունքը: Այսպես կոչված «Սոգութլվա պատերազմը» եղավ թշնամու դեմ հայ ժողովրդի երկու հատվածների առաջին համատեղ հաղթանակը Սարդարապատի ու Բաշ Ապարանի նախօրեին: Այն անխուսափելի կոտորածից փրկեց նաև տասնյակ հազարավոր փախստական-գաղթականների:

դ. 1918 և 1920թթ. թուրքական արշավանքների վերաբերյալ Շիրակի մարզի գյուղական բնակավայրերի և Գյումրու ազգաբնակչության շրջանում պահպանված բանավոր պատմությունների, արխիվային նյութերի, գիտական գրականության և այլ աղբյուրների համադրությամբ կազմվեց թուրքական արշավանքների հետևանքները ներկայացնող քարտեզ, որում առանձնացվեցին բոլոր այն գյուղերը, որտեղ կազմակերպվել են ինքնապաշտպանական կռիվներ, այն գյուղերը, որտեղ թուրքերն ունեցել են հենակետեր և զորակայաններ, որտեղ մարդկանց այրել են մարագներում ու եկեղեցիներում, որտեղ կազմակերպվել են զանգվածային սպանություններ:

2. Բազային ֆինանսավորմամբ ստացված հիմնական արդյունքները 2020թ.

ԳԱԱ ՇՀՀ կենտրոնը 2020թ. շարունակել է իրականացնել **«Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ-3»** գիտահետազոտական ծրագիրը /ղեկ.՝ պ.գ.թ. Արմեն Հայրապետյան/:

Հնագիտության գծով- 2020թ. մասնակի պեղումներ են իրականացվել են Մեծ Սեպասարի վաղ բրոնզիդարյան հուշարձանում, մաքրման և վերակոնսերվացման աշխատանքներ են կատարվել Ազատանի և Ջրաձորի ամրոցների և բնակավայրերի տարածքներում: Իրականացվել են փրկարարական պեղումներ Ջրափիի ջրասույզ դամբարանադաշտում, որտեղ պեղվել են 3 դամբարաններ: 2020 թ. ամռանը պեղումներ են կատարվել նաև Լեռնակերտի Վերի և Վարի Բերդ ամրոցներում և դամբարանադաշտերում: Զուգահեռ ՀՀ երկրագիտական և պատմության թանգարաններում քննության է ենթարկվել Շիրակի մարզի Արթիկի տարածաշրջանին վերաբերող՝ նախկինում պեղված կամ պատահական հայտնաբերված հնագիտական նյութը:

Պատմագիտության գծով- 2020թ. ապացուցվել է, որ տեղանունների գիտական հավաստի ստուգաբանությունների հիման վրա կարելի է կարևոր հետևություններ անել ոչ միայն հազարամյակներ առաջ այն ստեղծած տեղաբնիկների լեզվի և էթնիկական պատկանելության, այլև նրանց վարած տնտեսաձևի, հասարակական կառույցների, կենցաղի և դրանց հիմքի վրա բարձրացած պաշտամունքի ու կրոնի ինչ-ինչ տարրերի վերաբերյալ: Շարունակվել է պատմական Տայքի և հարակից տարածքների պատմաժողովրդագրական ուսումնասիրությունը, վեր են հանվել բոլոր բնակավայրերի արդի անվանումները, ինչի շնորհիվ հստակորեն տեղագրվել են Տայքի երբեմնի հայաբնակ գյուղերը: Քննվել են XXդ. սկզբին մեծ մասշտաբներ ընդունած միգրացիոն գործընթացները՝ մասնավորապես դեպի ԱՄՆ: Սկսվելով իբրև աշխատանքային միգրացիա, այն ընդգրկեց հասարակության բոլոր խավերը ու խիստ բացասական ազդեցություն թողնեց Արևելյան Շիրակի ինչպես սոցիալ-տնտեսական դրության, այնպես էլ ժողովրդագրական պատկերի վրա: Քննության ընթացքում վեր են հանվել շիրակցիների հայրենի գավառը լքելու պատճառները, ներկայացվել են արտագաղթի մասշտաբներն ու դրանց ազդեցությունը գավառի ժողովրդագրական պատկերի վրա, ներկայացվել է պանդխտության մեջ հայտնվածների վիճակը: Շրջանառության մեջ է դրվել Ալեքսանդրապոլի գավառի կրթամշակութային կյանքի վերաբերյալ արխիվային մեծաքանակ նյութ, պարբերական մամուլի մանրազնին ուսումնասիրմամբ բացվել է հայ ազատագրական-գաղափարական պայքարի նոր՝ մշակութաբանական շերտ: Ներկայացվել են XXI դարասկզբին տարածաշրջանի բնակչության թվի շարժընթացի, սեռատարիքային կազմի, բնական վերարտադրության և միգրացիայի փոփոխության ընթացքի մասին ժողովրդագրական բնույթի նոր տվյալներ:

Ազգագրության գծով - 2020թ. խնդիր է դրվել Լենինական-Գյումրու մասնագիտական ավանդույթները նկարագրել ենթամշակութային եզրույթների միջոցով, ինչը նոր հետազոտական ուղղություն է հայ ազգագրության մեջ: Կատարվել է «մասնագիտություն» երևույթի լեզվական ու իմաստաբանական առումների վերլուծություն, որովհետև դրա սահմանումները պատմականորեն փոփոխվել են գիտական-տեսական մոտեցումների և հենց ուսումնասիրության օբյեկտի զարգացման ընթացքում: Կատարվել է Գյումրու բանավոր երգաստեղծության տեքստի լեզվական ուսումնասիրություն: Քննության են առնվել ժողովրդական բանահյուսության առավել կենսունակ ժանրերը (քնարական ու վիպական բանահյու-

սության նմուշներ, առածաբանություն, դարձվածաբանություն), որոնք գերազանցապես գրառվել են նախաաղետյան շրջանում Շիրակի մարզի բնակչությունից: Իրականացվել են բանահավաքչական աշխատանքներ մարզի Արթիկի և Աշոցքի տարածաշրջանների համայնքներում: Հավաքված նմուշներում գերակշիռ տեղ են զբաղեցրել պարերգերն ու ողբերգերը: Դրանք համակարգվել և տիպաբանական քննության են ենթարկվել: ՈՒսումնասիրվել են նաև Կոմիտասի, Ս. Մելիքյանի և Ք. Քուշնարյանի կողմից 20-րդ դարասկզբին հավաքած շիրակյան ժողովրդական և աշուղական երգերի ժանրային, տիպաբանական առանձնահատկությունները:

Բանագիտության գծով- 2020թ. քննվել են Գյումրու արդի խոսվածքի ձևաբանական իրողությունները պատմական զարգացման մեջ, կատարվել է հեղինակային օրորոցային տեքստերի լեզվառճական քննություն՝ ինչի համար փաստական նյութ են ծառայել հայ հեղինակների խաղացնող և քնեցնող նշանակություն ունեցող մանկական ստեղծագործությունները: Գրի է առնվել մանկական բանահյուսությանն առնչվող բանահյուսական հարուստ նյութ:

2020-ին Կենտրոնում իրականացվող ծրագրի շրջանակներում ընդհանուր առմամբ հրատարակվել են «Գիտական աշխատություններ» պարբերականի 23-րդ հատորի առաջին (265 էջ) և երկրորդ (294 էջ) պրակները, «Հոգևոր Շիրակ.Պատմական ուղի և արդիականություն» վերնագրով հոդվածների ժողովածուն (342 էջ), «Պատմության դասերը. 1920-2020 թթ.: Հին խնդիրներ և նոր մարտահրավերներ» վերնագրով հոդվածների ժողովածուն (281 էջ), կենտրոնի գիտաշխատողների մենագրությունները (թվով 4), 63 գիտական հոդվածներ (7-ը՝ արտերկրում) և գիտաժողովների 34 զեկուցումներ (11-ը՝ արտերկրում):

Իրականացվել են՝ Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի թեմի ստեղծման 100-ամյակին նվիրված «Հոգևոր Շիրակ. պատմական ուղի և արդիականություն» խորագրով միջազգային երկօրյա գիտաժողովը՝ 51 մասնակիցներով (9-ը արտերկրից՝ առցանց), «Պատմության դասերը. 1920-2020 թթ.: Հին խնդիրներ և նոր մարտահրավերներ» խորագրով երիտասարդ գիտնականի ամառային դպրոցը 52 մասնակիցներով (11-ը Երևանից), հնագետ Լ. Եգանյանի հիշատակին նվիրված «Հանրապետական գիտական ընթերցումներ», «Ազգագրական ընթերցումներ», Հայաստանում խարհրդային կարգերի հաստատման 100-ամյակին նվիրված «Պատմագիտական ընթերցումներ», 4 հնավայրերի պեղումներ, 27 ազգագրական գիտարշավներ և 12 գիտական սեմինարներ: ՇՀՀ կենտրոնի գիտական, գիտակազմակերպչական և հրատարակչական գործունեության մասին մանրամասն տեղեկատվությամբ հաշվետու տարում գործել են ֆեյսբուքյան էջը և համացանցում տեղադրված երկլեզվյա կայք-էջը /www.shirakcenter.sci.am/:

ՇՀՀ կենտրոնի տնօրեն Ա. Հայրապետյան

գիտքարտուղար Ա. Ակոպով

3. Թեմատիկ ֆինանսավորմամբ ստացված արդյունքները 2020թ.

2018-2020թթ. ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի «Շիրակի մարզի գիտական կազմակերպություններում իրականացվող գիտական հետազոտությունների աջակցության ծրագիր-2018» մրցույթով կենտրոնում հաջողությամբ իրականացվել են երկու թեմաներ.

ա. ***«Ժողովրդագրական գործընթացներն Ալեքսանդրապոլի գավառում XX դարի առաջին քսանամյակում»*** թեմատիկ ֆինանսավորմամբ ծրագրի կատարման երկրորդ տարում հետազոտող խումբը արխիվային նորահայտ վավերագրերի, գիտական գրականության և ժամանակի պարբերական մամուլի հաղորդումների համադրմամբ ուսումնասիրել է 1918-1920 թթ. Ալեքսանդրապոլի գավառի պատմությանը վերաբերող պատմագիտական և ժողովրդագրական փաստերն ու տեղեկությունները՝ ամբողջացնելու համար գավառի 1900-1920 թթ. սոցիալ-քաղաքական և հատկապես էթնոժողովրդագրական հնարավորին չափ ամբողջական պատկերը: Առանձնահատուկ ուշադրության է արժանացել 1918 և 1920 թթ. թուրքական օկուպացիայի ժամանակաշրջանում Ալեքսանդրապոլի գավառի բնակչության ճակատագիրը և թուրքական իշխանությունների այստեղ վարած վարչաժողովրդագրական ու տնտեսական քաղաքականությունը: Թեմայի կատարման ժամանակահատվածում ՀՀ և արտերկրի գիտական պարբերականներում հրատարակվել են 14 գիտական հոդվածներ, պատրաստվել ու ընթերցողի դատին է հանձնվել հոդվածների և նյութերի ծավալուն ժողովածուն:

բ. ***«1918-1921 թթ. իրողությունները Շիրակի բնակչության պատմական հիշողության համատեքստում»*** թեմատիկ ֆինանսավորմամբ ծրագրի շրջանակներում կատարվել են համակողմանի դաշտային հավաքչական աշխատանքներ Շիրակի մարզի Ամասիայի, Աշոցքի, Ախուրյանի և Անիի տարածաշրջանների 50-ից ավելի գյուղերում և Գյումրի քաղաքում, որի արդյունքում գրանցվել են բնակչության մեջ պահպանված 1918 և 1921 թթ թուրքական տիրապետության վերաբերյալ հիշողությունները: Յուրաքանչյուր գյուղում, ձայնագրություններին զուգընթաց, իրականացվել է նաև թեմայի հետ կապված կոնկրետ դեպքերին առնչվող տեղավայրերի արձանագրում: Թեմայի կատարման ժամանակահատվածում հրատարակվել են գիտական 3 հոդվածներ: Բանավոր պատմությունների, արխիվային նյութերի, մասնագիտական գրականության և այլ աղբյուրների համադրությամբ հրատարակության է նախապատրաստվում «1918-1921 թթ. իրողությունները Շիրակի բնակչության պատմական հիշողության համատեքստում» վերտառությամբ ծավալուն մենագրությունը:

ՇՀՀ կենտրոնի տնօրեն Ա. Հայրապետյան

գիտքարտուղար Ա. Ակոպով

4. –

5. 2020 թ. հրապարակումների ցանկ

Մենագրություններ, ժողովածուներ

1. ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ›› հոդվածների պարբերական ժողովածու, Գյումրի, 2020, հ.23,պրակ 1, 265էջ:
2. ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ›› հոդվածների պարբերական ժողովածու, Գյումրի, 2020,հ.23, պրակ 2, 294էջ:
3. Հոգևոր Շիրակ. պատմական ուղի և արդիականություն, Հոդվածների ժողովածու, Եր., «Գիտություն», 2020, 342 էջ:
4. «Պատմության դասերը. 1920-2020 թթ.: Հին խնդիրներ և նոր մարտահրավերներ», Հոդվածների ժողովածու, Գյումրի, 2020, 281 էջ:
5. Հայրապետյան Ա.Ս., Ժողովրդագրական գործընթացներն Ալեքսանդրապոլի գավառում (XX դ. առաջին քսանամյակ), Հոդվածների և նյութերի ժողովածու, Եր., «Գիտություն», 2020, 244 էջ:
6. Ավագյան Ի.Է., Մեծ եղեռնը վերապրածները, Իմ կյանքը. Գ. Հմայակյանի հուշապատումը, Գյումրի, «Էլդորադո», 2020, 388 էջ:
7. Հովհաննիսյան Ռ.Պ., Արգելակման ճառագայթում, Եր., «Ակտուալ արվեստ» մշակութային միություն, 2020, 188 էջ:
8. Մատիկյան Հ.Հ., Անուշ ձայնով կանչեմ օրոր (անգլալեզու և հայ օրորոցային տեքստերի լեզվա-բանագիտական քննություն), Գյումրի, «Էլդորադո», 2020, 178 էջ (6 ներդիր):

Հոդվածներ, զեկուցումներ

1. Ալեքսանյան Կ.Վ., Վիրաբյան Ա.Ս., Շիրակի թեմի առաջնորդ Արտակ Վարդապետի հուշերը 1918 թ. մայիսի 15-ին Ալեքսանդրապոլը թուրքերի կողմից գրավելու մասին, Ե., Բանբեր Հայաստանի արխիվների, N 129, 2020, էջ 85-115:
2. Ալեքսանյան Կ.Վ., Պատմագիտությունը հայկազյան հայագիտականի էջերում, Բեյրութ, Հայկազեան հայագիտական հանդէս, Յոբելեանական Հատոր, 2020, էջ 174-185:
3. Ավագյան Ի.Է., Ստորջրյա հնագիտության դասավանդման անհրաժեշտությունը ՀՀ-ում, Գյումրի, ՇՊՀ «Գիտական տեղեկագիր», 2020, N 1, պրակ Բ, էջ 265-274:
4. Ավագյան Ի.Է., Ստորջրյա հնագիտության դասավանդման անհրաժեշտությունը բուհական դասընթացներում, Վանաձոր, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հոդվածներ, «ՍԻՄ տպագրատուն» ՍՊԸ, 2020, թիվ 1, էջ 186-195:
5. Բազեյան Կ.Ռ., Հայ կանանց հիմնախնդիրները XIXդ. վերջի- XXդ. սկզբի արևմտահայ մամուլում, Եր., Հայ մամուլի դերը ազգային արժեհամակարգի ձևավորման և պահպանման գործում. Ընտանիք, հայրենիք, եկեղեցի, Ազդարար 225, Գիտաժողովի նյութեր, 28-29 նոյեմբերի 2019թ., 2020, էջ 88-98:

6. Բազեյան Կ.Ռ., Յու. Մկրտումյանի ղեկավարությամբ ազգագրական գիտարշավները որպես մասնագիտական հմտությունների ձեռքբերման եղանակ, Եր., Յուրի Մկրտումյանի ծննդյան 80-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժաղովածու, 2020, էջ 47-53:
7. Բոյաջյան Ա.Գ., Ավետիսյան Գ.Ռ., Շիրակի արդյունաբերության զարգացման գործընթացները և հիմնախնդիրները (XXդ. վերջ և XXI սկիզբ), Գյումրի, ՇՊՀ «Գիտական տեղեկագիր», 2020, N 1, պրակ Բ, էջ 242-254:
8. Բոյաջյան Ա.Գ., Ավետիսյան Գ.Ռ., Շիրակի արդյունաբերության զարգացման գործընթացները և հիմնախնդիրները (XXդ. վերջ և XXI սկիզբ), «Աղետի գոտուց զարգացման գոտի. Անցյալի դասերը և ժամանակի մարտահրավերները», Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Գյումրի, 2020, էջ 29-37:
9. Հովհաննիսյան Ա.Լ., Ակնարկ «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի ստեղծման ընթացքի և արդի խնդիրների շուրջ, Արցախ, Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու, 2020, h. 23, պրակ 1, էջ 11-18:
10. Հովհաննիսյան Ա.Լ., Թարգմանության տեսության հին էջերից (Հունաստանի և Պարսկաստանի օրինակով), Եր., Պատմություն և քաղաքականություն «Գիտական հանդես», 2020, h . 2, պրակ 7,էջ 86-95:
11. Մատիկյան Հ.Հ., Տիկնիկի մարդացումը բանավոր պատումներում և հեղինակային ստեղծագործություններում, Եր., Հասկեր մանկական գրականության և բանահյուսության տարեգիրք, 2020, էջ 31-38:
12. Մելքոնյան Վ.Գ., Կրթական գործը Ալեքսանդրապոլ-Լենինականում՝ ըստ պարբերական մամուլի նյութերի, Հայ մամուլի դերը ազգային արժեհամակարգի ձևավորման և պահպանման գործում. Ընտանիք, հայրենիք, եկեղեցի Ազդարար 225: Նյութեր հայ մամուլի 225-ամյակին նվիրված գիտաժողով, Եր., «Գիրք» հրատարակչություն, 2020, էջ 177-188:
13. Պետրոսյան Ս.Գ., Խեթական արքա Սուպիլուլիումա I-ի կնիքի և հայկական երկնային խորհրդանշանների ընդհանրությունները, Եր., «ՎԷՄ» համահայկական հանդես, 2020, թիվ 1, էջ 22-43:
14. Авагян И.Э., Оганнисян Г.А., Пережившие армянский геноцид и великая отечественная война, Майкоп, Сборник статей XIII региональных научных чтений, посвященных дню славянской письменности и культуры, 2020, с. 6-17.
15. Айвазян Г.С. Александропольский уезд во время русско-турецкой войны 1877-1878гг. Сборник статей XXX международной научно-практической конференции, М., «Научно-издательский центр «Актуальность. РФ», 2020, часть II, с. 49-54.
16. Айвазян Г.С., Русская книжная типография в Александрополе: Библиографический указатель. Сборник статей по материалам XXXV международной научно-практической конференции, М., Изд. «Интернаука», 2020, № 6 (27), с. 13-23.

17. Айрапетян А.С., Акопов А.А., Новые выявления турецкой политики геноцида армян в Александропольском уезде (ноябрь 1920 г.-апрель 1921 г.), Белгород, “Научные Горизонты” Международный научный журнал, 2020, 8 (36), с. 4-16.
18. Бояджян А.Г., Динамика этнического состава населения стран СНГ и республик Прибалтики (конца XX в. и начала XXI в.), Уфа, Международный академический вестник, материалы III международный научно-практический конференции, 2020, N3(47), с. 26-33.
19. Оганнисян А.Л., Национальные праздники в селе Ахурян, Ер., «Регион и Мир», 2020, №3, с. 114-118.
20. **Хачатрян А.А.**, Худавердян А.Ю., Оганесян А.А., Енгибарян А.А., Матевосян Р.Ш., Кочарян Г.Г., Паланджян Р.С., **Еганян Л.Г.,** Население Армянского нагорья в эпоху античности (по краниологическим материалам городских и сельских поселений), Вестник археологии, антропологии и этнографии, Тюмень, 2020. N1 (48), с. 95-114:
21. Harutyunyan H.H., Matikyan H.H., On peculiarities of Shirak's current musical folklore. Warsaw, «World Science», 2020, N 12, p.35-42.
22. Hayrapetyan A.S., Migration to the USA by People of Shirak in 1908-1914, Y., “Review of Armenian studies”, 2020, N 2 (23), p. 72-84.

Հոդվածները հրատարակվել են ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուում, Գյումրի, 2020, հ. 23, պրակ 1, 265 էջ:

1. Ալեքսանյան Կ.Վ., Ալեքսանդրապոլի գավառի բնակչության կորուստները թուրքական բռնազավթման շրջանում 1918 մայիս դեկտեմբերին, էջ 92-104:
2. Ակոպով Ա.Ա., Խոտորջուրցիների պայքարն ավազակախմբերի դեմ XIX դ. II կեսին, էջ 59-70:
3. Ավագյան Ի.Է., Մեծ եղեռնը վերապրած Ալխոր Շուշանյանի Հուշապատումը, էջ 105-117:
4. Բազեյան Կ.Ռ., «Մասնագիտություն» հասկացության ավանդական և արդի ընկալումներն ու մեկնաբանումները, էջ 139-154:
5. Բոյաջյան Ա.Գ., Ավետիսյան Գ.Ռ., Շիրակի մարզի գյուղատնտեսությունը XX դ. Դարավերջին և XXI դարասկզբին, էջ 239-256:
6. Եգանյան Լ.Գ., Ազատանի բազմանիստ ապակյա կնիքի պատկերագրությունը և իմաստաբանությունը, էջ 5-32:
7. Հայրապետյան Ա.Ս., Դրվագներ 1918թ. Մայիսյան հերոսամարտերի պատմությունից. Շիրակի զոյամարտը, էջ 71-82:
8. Հարությունյան Հ.Հ., Ժողովրդական երգը որպես մեկնաբանություն, էջ 155-165:
9. Հովհաննիսյան Ա.Լ., Ավանդական աշխատանքի երգերի կիրառության խնդրի շուրջ (սանդի, խնոցու և գութանի օրինակով), էջ 166-177:

10. Հովհաննիսյան Ռ.Պ., Սահակյան Կ.Ա., Գյումրու բանավոր երգաստեղծության տեքստի լեզուն, էջ 178-190:
11. Մատիկյան Հ.Հ., Բանահյուսական օրորոցային տեքստի արարման միջավայր, էջ 223-238:
12. Մելքոնյան Վ.Գ., Ալեքսանդրապոլ-Լենինականի տնտեսությունը՝ ըստ պարբերական մամուլի նյութերի 1907-1925թթ., էջ 190-198:
13. Պետրոսյան Ս.Գ., Առասպելաբանված եղջյուրի և միեղջյուրի մասին, էջ 33-58:

Հոդվածները հրատարակվել են ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուում, Գյումրի, 2020, հ. 23, պրակ 2, 294 էջ:

1. Այվազյան Գ.Ս., «Ալեքսանդրապոլի դպրոցների պատմությունից», էջ 116-133:
2. Բոյաջյան Ա.Գ., Շիրակի մարզի բնակչության զբաղվածությունը, էջ 149-161:
3. Խաչատրյան Հ.Հ., Եգանյան Լ.Գ., Պետրոսյան Լ.Ա., Քեթիի դամբարանադաշտի նորահայտ հատվածի պեղումները, էջ 36-57:
4. Հայրապետյան Ա.Ս., Շիրակցիներն Ամերիկայում XXդ. սկզբին. աշխատանքային միգրանտներ, թե՞ գաղթականներ, էջ 97-115:
5. Պետրոսյան Ս.Գ., Հնագույն Տարոնի քրմության մասին, էջ 74-86:
6. Պետրոսյան Լ.Ս., Երվանդունի թագավորների թագադրման հնարավոր վայրի մասին, էջ 87-96:
7. **Վարդանյան Բ.**Վ., Զարիկյան Ն.Հ., Դավթյան Ռ.Հ., Մանուկյան Ս.Վ., Սարիբեկյան Մ.Գ., Լեռնակերտի կենդանաբանությունն ըստ 2019 թ. պեղումների արդյունքների, էջ 58-73:

Հոդվածները հրատարակվել են «Հոգևոր Շիրակ. պատմական ուղի և արդիականություն» հոդվածների ժողովածուում, Եր., «Գիտություն», 2020, 342 էջ:

1. Ալեքսանյան Կ.Վ., Բարսեղյան Ա.Գ., Արցախյան գործոնի դերը Հայաստանի Հանրապետության ներքաղաքական զարգացումներում (1992-1998), էջ 3-9:
2. Ակոպով Ա.Ա., Խոտորջուրը Հայոց Մեծ եղեռնի նախօրեին, 2020, էջ 10-17:
3. Այվազյան Գ.Ս., «Թեոդորոս Շիրակունու ձեռագրական ժառանգությունը», էջ 26-34:
4. Ավագյան Ի.Է., Ստալինյան բռնաճնշումները՝ ըստ «Մեծ եղեռնը վերապրածները» մատենաշարի, էջ 192-199:
5. Բազեյան Կ.Ռ., XIX դարի վերջի-XX դարասկզբի հայկական պարբերականները Ալեքսանդրապոլի եպիսկոպոսական վիճակի մասին, էջ 200-208:
6. Բոյաջյան Ա.Գ., Հարավային Կովկասի բնակչության էթնիկական կազմի շարժընթացը XIXդ. վերջ-XXIդ. սկիզբ, էջ 34-42:

7. Հայրապետյան Ա.Ս., Գաղթականության վիճակն Ալեքսանդրապոլի գավառում 1919-1920 թթ.: «Պոլիգոնի» ռդիսականը, էջ 100-108:
8. Հարությունյան Հ.Հ., Հայ հոգևոր երգը միջնադարյան Շիրակում, էջ 240-245:
9. Հովհաննիսյան Ռ.Պ., Թովմասյան Հ.Վ., Սաղմոսաց գրքի մի քանի տարընթերցումներ հայերեն թարգմանություններում, էջ 253-261:
10. Մատիկյան Հ.Հ., Մանկախաղաց տեքստերը Շիրակի տարածաշրջանում, էջ 271-280:
11. Մելքոնյան Վ.Գ., Տոները լենինականյան ընտանիքում՝ ըստ 1920-1940-ական թթ. պարբերական մամուլի նյութերի, էջ 287-293:
12. Պետրոսյան Լ.Ս., Երկվորյակների առասպելի հետքերը հայոց թագավորների մասին ավանդազրույցներում, էջ 160-168:
13. Պետրոսյան Ս.Գ., Հնագույն Շիրակի պաշտամունքի և քրմության մասին, էջ 168-177:
14. Սահակյան Կ.Ա., Նարեկը՝ որպես բժշկարան և հոգեթերապիայի միջոց, էջ 314-321:
15. Վարոսյան Ե.Ռ., Ալեքսանդրապոլի ավանդական երաժշտության նմուշները Նիկողայոս Տիգրանյանի ստեղծագործության մեջ, էջ 321-331:

Հոդվածները հրատարակվել են «Պատմության դասերը. 1920-2020 թթ.: Հին խնդիրներ և նոր մարտահրավերներ» հոդվածների ժողովածուում, Գյումրի, 2020, 281 էջ:

1. Ալեքսանյան Կ.Վ., Ալեքսանդրապոլի գավառի պետական նքաղաքական գործիչները 1918-1920 թթ., էջ 192-220:
2. Ավագյան Ի.Է., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը Հովհաննես Թռչունյան-Հովհաննիսյանի հուշերում, էջ 259-280:
3. Բազեյան Կ.Ռ., 1918-1920 թթ. թուրքական արշավանքները շիրակցիների բանավոր հուշերում, էջ 146-155:
4. Բոյաջյան Ա.Գ., Ժողովրդագրական գործընթացները Ալեքսանդրապոլ-Լենինականի գավառում 1914-1930-ական թթ., էջ 236-259:
5. Սահակյան Կ.Ա., Հայ զինվորի բարոյահոգեբանական նկարագիրը արդի մարտահրավերների համատեքստում, էջ 220-236:
6. Айрапетян А.С., Акопов А.А., Продолжение геноцидной политики Турции в Александропольском уезде в 1918-1921гг., էջ 62-85.

6. Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Տնօրեն՝ պ. գ. թ., դոցենտ Ա. Ս. Հայրապետյան,
Գիտքարտուղար՝ պ. գ. թ. Ա. Ա. Ակոպով,
Էլեկտրոնային փոստ՝ info@shirakcenter.sci.am, hkentron@mail.ru,
Կայքէջ՝ www shirakcenter.sci.am

7. —-

8. Պաշտպանվել է 1 թեկնածուական ատենախոսություն:

9. ---

10. –ՇՀՀ կենտրոնը հաշվետու տարում համագործակցել է ԳԱԱ հայագիտական ինստիտուտների, ԵՊՀ-ի, ՀՊՄՀ-ի, ՃՇԱՀ, ՎՊՀ, ՇՊՀ-ի մի շարք հայագիտական ամբիոնների, Կոմիտասի անվ. կոնսերվատորիայի, Մ. Մաշտոցի անվան Մատենադարան հին ձեռագրերի ինստիտուտ, Կոմիտասի թանգարան–ինստիտուտ, Կումայրի պատմամշակութային արգելոց-թանգարան, Ալ. Թամանյանի անվան ճարտարապետության թանգարան-ինստիտուտ, Հայոց ազգագրության, Հայաստանի պատմության ազգային, Գյումրու երկրագիտական և ժող. Ճարտարապետության ու քաղաքային կենցաղի թանգարանների, ԳԱԹ-ի և այլ պետական ու հասարակական կազմակերպությունների հետ:

Համատեղողների թիվը՝ 5 /ՇՊՀ/, 2 /ԵՊԿ Գյումրու մասնաճյուղ/, 2 /ՇԵԹ/, 2 /ՀԱԻ/:

2020թ. եղել են 11 համատեղ հրապարակումներ. Հնագիտության և ազգագրության ինստիտուտ /3/, Հայաստանի ազգային արխիվ /2/, Շիրակի երկրագիտական թանգարան /3/, ԵՊԿ Գյումրու մասնաճյուղ /1/, Շիրակի պետական համալսարան /2/:

ՇՀՀ կենտրոնի տնօրենի՝ Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

գիտքարտուղար՝ Ա. ԱԿՈՊՈՎ

Աղյուսակ 1

2020թ. թեմատիկայի ամփոփ տվյալներ

N	Կազմակերպությունը	Թեմաների կամ պայմանագրերի թիվը (n) և ֆինանսավորման ծավալը (X հազ.դր.)			
		Նպատակային ֆինանսավորում	Բազային ֆինանսավորում	Թեմատիկ ֆինանսավորում	Տնտ. Պայմանագրեր
1	«Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ		1	3	
			26.758.500	4.032.000	

Աղյուսակ 2

Աղյուսակ 3

Կազմակերպության անցկացրած հանրապետական և միջազգային միջոցառումները

N	Միջոցառման անվանումը	Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	Այդ թվում՝ արտերկրից
1	2	3	4	5
1.	«Հոգևոր Շիրակ. պատմական ուղի և արդիականացում» միջազգային գիտաժողով՝ նվիրված Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի թեմի 100-ամյակին	Գյումրի, 17-18 հոկտեմբերի ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի թեմ, Շիրակի մարզպետարան	51	9
2.	Պատմագիտական ընթերցումներ նվիրված Հայաստանում խարհրդային կարգերի հաստատման 100-ամյակին	Գյումրի, 27 նոյեմբերի ԳԱԱ ՇՀՀ կենտրոն, Շիրակի պետական համալսարան, Շիրակի երկրագիտական թանգարան, «Կումայրի» արգելոց թանգարան	15	2
3.	Հանրապետական գիտական ընթերցումներ նվիրված հնագետ Լ. Եգանյանի հիշատակին	Գյումրի, 28 նոյեմբերի ԳԱԱ ՇՀՀ կենտրոն, ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Շիրակի երկրագիտական թանգարան	19	7
4.	Ազգագրական ընթերցումներ	Գյումրի, 29 նոյեմբերի ԳԱԱ ՇՀՀ կենտրոն, ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Շիրակի երկրագիտական թանգարան	24	
5.	«Պատմության դասերը. 1920-2020 թթ. հին խնդիրներ և նոր մարտահրավերներ» թեմայով երիտասարդ գիտնականի ամառային դպրոցը	Գյումրի, 7-13 դեկտեմբերի ԳԱԱ ՇՀՀ կենտրոն, ԳԱԱ պատմության ինստիտուտ, ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ	52	

Աղյուսակ 4

Աղյուսակ 5

կազմակերպությունում արտասահմանյան գիտնականների ընդունելությունը

(*համավարակով պայմանավորված կապն օտարերկրյա գործընկերների հետ իրականացվել է առցանց եղանակով՝ ZOOM հարթակում*)

N	Կազմակերպու-թյունը	Երկիրը	Ընդունված գիտնականների քանակը		
			Գիտաժողովներին մասնակցելու	Համատեղ գիտական աշխատանք կատարելու	Բանակցությունների և քննարկումների համար
1	2	3	4	5	6
1	«Շիրակի հայագի-տական հետազո-տությունների կենտրոն» ՊՈԱԿ	ՌԴ, Մեծ Բրիտանիա Գերմանիա, Վրաստան, Հունաստան, Թուրքմենստան, Ուկրաինա, ԱՄՆ	4 1 1 1 1 1 1 1		4 2 2 1 2 1

Աղյուսակ 6

Աղյուսակ 7

ԳԱԱ գիտաշխատողների 2020թ. հրապարակումների ընդհանուր քանակը

N	Կազմակերպությունը	Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր		Ուսումնական ձեռնարկ, դասագիրք		Հոդվածներ, զեկուցումներ		Թեզիսներ	
		Հանրա-պետ.	Արտա-սահմ.	Հանրա-պետ.	Արտա-սահմ.	Հանրա-պետ.	Արտա-սահմ.	Հանրա-պետ.	Արտա-սահմ.
1	2	3	4	5	6	7	8	9	10
	«ՇՀՀ կենտրոն» ՊՈԱԿ	8		-	-	56	7	1	3

Աղյուսակ 8

Աղյուսակ 9

Աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներն առ 01.01.2020թ.

N	Կազմակերպությունը	Աշխատողների ընդհանուր թիվը	Գիտական աշխատող ների թիվը	ԳԱԱ ակադեմի-կոսներ	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ	Գիտության դոկտորներ	Գիտության թեկնածուներ
1	2	3	4	5	6	7	8
	«ՇՀՀ կենտրոն» ՊՈԱԿ	21	18	----	----	2	12

ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի տնօրենի՝ Ա. Հայրապետյան

ГОДОВОЙ ОТЧЕТ

Об основных результатах научной и научно-организационной деятельности 2020г. Ширакского центра арменоведческих исследований НАН РА

1. Основные результаты деятельности ШЦАИ НАН РА за 2020г. следующие:

В рамках научной темы «Археологические и историко-культурные исследования Ширака-3» (рук. к.ист.н. А.Айрапетян).

а. Спасательные раскопки некрополя Джрапи, несмотря на их небольшой размер, предоставили новый материал об общем расположении поселений в раннем железном веке в прибрежных районах Ахуряна, соотношения поселение-некрополь, плотности населения, высокого экономического уровня, общности видов захоронений, ритуалов, материальной и духовной культуры с другими памятниками Армении тогдашнего периода.

б. Исследование зоологических данных, полученных из раскопок Лернакерта, показало что одним из развитых ветвей хозяйства региона в III-I тыс. до н.э. было скотоводство. Обнаруженный материал дает информацию как об употребляемой пище древних сообществ Лернакерта, так и о развитости разных областей хозяйства в данном периоде времени (кожевничество, текстильная промышленность, переработка молочной продукции и т.д.).

в. Проведено расследование истории борьбы сопротивления против турецких войск в мае 1918 г., развернутого в селах Восточного Ширака, освещена роль борьбы в истории Майских сражений. Фронт, сформированный местными, западноармянскими добровольцами и беженцами, ослабил тыл турецких войск, двигающихся к Сардарапату. Так называемая “Согутлинская война” была первой совместной победой двух ветвей армянского народа над врагом в предверии Сардарапата и Баш Апарана. Эта битва спасла также от неминуемого погрома десятки тысяч беженцев.

г. Сопоставлением устных рассказов, архивных материалов, научной литературы и других источников, сохранившихся у населения Гюмри и сельских районов Ширакской области о турецких вторжениях в 1918 и 1920гг., была составлена карта, где представлены следствия турецкого вторжения, в которой были выделены все те деревни, где организовывались бои самообороны, были турецкие опорные пункты и военные базы, где сжигали людей в сараях и церквях, где устраивались массовые убийства.

2. Основные результаты по базовому финансированию в 2020 году

По археологии - в 2020г. были проведены частичные раскопки археологического памятника эпохи ранней бронзы Мец Сепасар, очистительные и реставрационные работы в районе крепостей-поселений Азатана и Джрапи. Завершены спасательные раскопки потопленных некрополей Джрапи. Проведены спасательные раскопки в потопленном некрополе Джрапи, где были раскопаны 3 склепа. Летом 2020г. были также проведены раскопки в некрополях и крепостях Вери и Вари Берд Лернакерта. Параллельно в геологическом музее и музее истории РА исследованы найденные или раскопанные археологические материалы, относящиеся к Артикскому региону Ширакского марза.

По историографии в 2020г. доказано, что на основе научной достоверной этимологии топонимов, созданных тысячелетия назад коренными жителями, можно делать важные выводы не только об их языке и этнической принадлежности, но и о веденным ими хозяйстве, общественных строений, быта и элементов религии и поклонения. Продолжилось историко-демографическое изучение исторического Тайка и прилегающих к нему местностей, названы современные названия всех поселений, в результате чего четко определены бывшие населенные армянами села Тайка. Исследованы принявшие большие масштабы миграционные процессы начала XXв., в частности в США. Начавшийся в качестве трудовой миграции этот процесс охватил все слои общества и оставил отрицательный след на социально-экономическое и демографическое положение Восточного Ширака. В результате исследования освещены причины по которым ширакцы покинули родной уезд, представлены масштабы эмиграции и их влияние на демографию области, а также состояние беженцев. В научный обиход вошли множество архивных материалов, относящихся к культурно-образовательной жизни Александропольского уезда, доскональным изучением периодической прессы выявлен новый культурный слой армянской освободительно-идеологической борьбы. Представлены новые демографические данные о изменении количества населения региона в начале XXI века, о половом возрастном составе, о естественном приросте и миграционных изменениях.

По этнографии - в 2020г. поставлена задача описать профессиональные традиции Ленинакан-Гюмри посредством субкультурного концепта, что является новым исследовательским направлением в армянской этнографии. Проведен анализ лингвистического и семантического смыслов концепции “профессия”, так как определения последнего исторически менялись в процессе развития как научно-теоретических подходов, так и исследуемого объекта. Проведено лингвистическое изучение текста устного написания песен Гюмри. Исследованы наиболее жизнеспособные жанры народного фольклора (образцы лирического и эпического фольклора, притчи, фразеологизмы), которые главным образом записывались до стихийного бедствия населением Ширакского марза. Осуществлены собирательные работы фольклорного материала в Ашоцкой и Артикской регионах Ширакского марза. В собранных образцах подавляющее место занимают танцевальные и скорбные песни. Их систематизировали и подвергли типологическому исследованию. Изучены также жанровые и музыкально-типологические особенности ширакских народных и ашугских песен, собранных в начале XXв. Комитасом, С.Меликяном и К.Кушнаряном.

По филологии- в 2020 г. исследованы морфологические реалии современного гюмрийского говора в историческом развитии, проведено лингвистическое исследование авторских колыбельных текстов, для чего фактическим материалом послужили детские произведения армянских авторов, имеющих усыпляющее и игровое значение. Записан богатый фольклорный материал, относящийся к детскому фольклору.

В 2020 г. в Центре в рамках проводимой программы в общем расчете были опубликованы первый (265 стр.) и второй (294 стр.) праки 23-го тома периодического сборника Центра “Научные труды”, сборник материалов с заглавием “Духовный Ширак: Исторический путь и современность” (342стр.), сборник материалов с заглавием “Уроки истории: 1920-2020гг..Старые воп-

росы и новые вызовы” (281стр.), 4 монографии научных сотрудников Центра, 63 научные статьи (7 зарубежом) и 34 докладов конференций (11 зарубежом).

Провели международную двухдневную конференцию, посвященную 100-летию создания Ширакской епархии, с заглавием “Духовный Ширак: Исторический путь и современность” с 51 участниками (9 онлайн зарубежных); летнюю школу молодых ученых с заглавием “Уроки истории: 1920-2020гг..Старые вопросы и новые вызовы”, с 52 участниками (11 из Еревана); посвященные памяти археолога Л. Еганян “Республиканские научные чтения” и “Этнографические чтения”; посвященную 100-летию установления советских порядков в Армении “Историографические чтения”; раскопки 4-х археологических памятников; 27 этнографические экспедиции; 12 научных семинара. Действовали двухязычный сайт (www.shirakcenter.sci.am) Центра и страница на фейсбуке, с подробной информацией о научной, научно-организационной и издательской деятельности Центра.

Директор ШЦАИ А. Айрапетян

Научный секретарь А. Акопов

3. Результаты полученные тематическим финансированием в 2020г.

В 2018-2020гг. в Центре успешно выполнены две темы, прошедшие по конкурсу “Программа поддержки научных исследований, проводимых в научных организациях Ширака” Государственного комитета науки МОНКС РА.

а. На второй год проведения программы тематического финансирования по теме **“Демографические процесы в Александрапольском уезде в первом 20-летии 20-го века”** исследовательская группа, сопоставлением нововыявленных архивных документов, научной литературы и сообщений периодической печати исследовала историко-демографические факты и данные, имеющие отношение к истории Александропольского уезда в 1918-1920гг., для обобщения социально-политического и, особенно, этнодемографического положения уезда в 1900-1920гг. Особое внимание уделено судьбе населения Александропольского уезда во время турецкой оккупации в 1918 и 1920гг. и административно-демографической и экономической политике, проводимой здесь турецкими властями. В период проведения темы в научной периодической печати РА и зарубежья опубликованы 14 научных статьей, подготовлен и передан суду читателей объемный сборник материалов и статьей.

б. В рамках мероприятий предусмотренных по программе темы **“Реалии 1918-21 гг. в контексте исторической памяти населения Ширака”** проведены разносторонние полевые собирательные работы в более 50-ти селах регионов Амасии, Ашоцка, Ахуряна и Ани Ширакского марза, а также в городе Гюмри, в результате чего были записаны памятки, сохраненные у населения о турецком захватничестве в 1918 и 1921гг. В каждом селе, параллельно с записями, осуществлена также регистрация местности, имеющих отношение к конкретным случаям, связанных с темой. В период проведения темы опубликованы 3 научные статьи. Сопоставлением устных историй, архивных материалов, профессиональной литературы и других источников готовится к публикации объемная монология ”Реалии 1918-1921гг. в контексте исторической памяти населения Ширака”.

Директор ШЦАИ А. Айрапетян

Научный секретарь А. Акопов

A N N U A L R E P O R T

on the main results of scientific research and scientific organizational activities of Shirak Center for Armenological Studies of the RA National Academy of Sciences

1. **The most important results of the activities of 2020 of Shirak Center for Armenological Studies of the RA NAS are as follows:**

Within the scientific topic of **«Archaeological and historical-ethnographic studies of Shirak-3»** /supervisor: Armen Hayrapetyan/:

a. Rescue excavations of Jrapi grave fields, despite their small size, provided new material for the study of the general location of settlements in the early Iron Age in the coastal areas of Akhuryan, the settlement-grave field ratio, population density, high economic level, and for the study of their generality with other contemporary monuments of Armenia, burial ways, rituals, material and spiritual culture.

b. The study of zoological data obtained from the excavations of Lernakert showed that in the III-I millennia BC one of the most developed branches of the region's economy was cattle breeding. The discovered material provides information on the food composition of the ancient communities of Lernakert, as well as on the development of various branches of the economy (leather industry, textile, dairy products) in the given period.

c. Examination of the history of the resistance struggle against Turkish troops in the villages of eastern Shirak in May 1918 was conducted, the role of the struggle for survival in the history of the May heroic battles was covered. The front, made up of locals, Western Armenian volunteers and refugees, weakened the rear of the Turkish troops moving towards Sardarapat. The so-called "Sogutli war" was the first joint victory of the two sections of the Armenian people against the enemy on the eve of Sardarapat and Bash Aparan. It saved tens of thousands of refugees from the inevitable massacre.

d. A map was compiled presenting the results of the Turkish invasions. It was compiled on the basis of a combination of oral histories, archival materials, scientific literature and other sources preserved in the rural areas of the Shirak region, and among the population of Gyumri about the Turkish invasions in 1918 and 1920. The map shows all the villages where self-defense battles were organized, the villages where the Turks had bases, military bases, where people were burned in haylofts and churches, where mass killings were organized.

2. The main results of 2020 obtained with basic financing

Shirak Center for Armenological Studies of the RA NAS continued to carry out **«Archaeological and historical-ethnographic studies of Shirak-3»** /supervisor: Armen Hayrapetyan/ scientific research:

In the field of archeology – In 2020 partial excavations were carried out in the early Bronze Age monument of Mets Sepasar, cleaning and re-conservation works were carried out in the areas of Azatan, Jradzor castles and in the territories of the settlements. Rescue excavations were carried out in the sinking grave field of Jrapi, where 3 tombs were excavated. In the summer of 2020, excavations were carried out in "Veri Berd" and "Vari Berd" castles of Lernakert and in the grave fields. At the same time, the museums of geography and history of the Republic of Armenia examined the previously excavated or accidentally discovered archeological material related to the Artik region of the Shirak region.

In the field of historiography - It has been proved in 2020 that on the basis of scientifically reliable etymologies of toponyms it is possible to make researches not only on the language and ethnicity of the natives who created it thousands of years ago, but also on their economy, social structures, way of life, and some elements of worship and religion based on them. The historical-demographic study of the historical areas adjacent to historical Tayk was continued, the modern names of all the settlements were revealed, due to which the former Armenian-populated villages of Tayk were clearly located. The large-scale migration processes, particularly to the United States at the beginning of XX century were examined. Starting as a labor migration, it covered all classes of society and had a very negative impact on both the socio-economic situation and the demographic picture of eastern Shirak. During the examination, the reasons for leaving the native province of Shirak were revealed, the scale of emigration and their impact on the demographic picture of the province were presented, and the situation of those in exile was presented. A large amount of archival material on the educational and cultural life of the province of Alexandrapol has been put into circulation, a new so-called cultural layer of the Armenian liberation-ideological struggle has been opened with the careful study of the periodical press. New demographic data on the movement of the population of the region, gender-age structure, natural reproduction, migration change at the beginning of XXI century were presented.

In the field of ethnography - A task was set in 2020 to describe the professional traditions of Leninakan-Gyumri through subcultural terms, which is a new research direction in Armenian ethnography. An analysis of the linguistic and semantic aspects of the term "profession" has been carried out, because its definitions have historically been changed during the development of scientific-theoretical approaches and the very object of study. A linguistic study of the text of Gyumri's oral song composition was carried out. The most vibrant genres of folklore (samples of lyrical and epic folklore, proverbs, phraseology) were examined, which were mostly recorded in the pre-disaster period by the population of Shirak region. Folklore collecting works were carried out in the communities of Artik and Ashotsk of the region. Dance songs and tragedy songs dominated the collected samples. They were coordinated and typologically examined. The genre and typological peculiarities of Shirak folk troubadour songs collected by Komitas, S. Melikyan and K. Kushnaryan at the beginning of the 20th century have been studied as well.

In the field of Folklore Studies- In 2020 the morphological positions of Gyumri's Modern Dialect have been viewed in the path of historical development, linguo-stylistic analysis has been carried out in the context of literary lullaby texts- the nursery texts are seen as factual material.

In the framework of the field work rich folk material has been collected.

As part of the program being implemented at the Center, the first (265 pages) and second (294 pages) volumes of the 23rd volume of the journal "Scientific Works" "Spiritual Shirak" were published in 2020. Collection of articles "Historical Path and Modernity" (342 pages), "Lessons of the History: 1920-2020: Collection of articles "Old problems - new challenges" (281 pages), monographs of the Center's staff (No. 4), 63 scientific articles (7 abroad), 34 conference reports (11 abroad).

A two-day international conference entitled as "Spiritual Shirak: Historical Way - Modernity" was held with 51 participants (9 from abroad: online) dedicated to the 100th anniversary of the establishment of the Shirak Diocese of the Armenian Apostolic Church, "History lessons": 1920-2020. Old problems and new challenges "young scientist's summer school with 52 participants (11 from Yerevan), archeologist L. "Republican Scientific Readings", "Ethnographic Readings" dedicated to the memory of Yeganyan, "Historical Scientific Readings" dedicated to the 100th anniversary of the establishment of Soviet rule in Armenia, excavations of 4 ancient sites, 27 ethnographic scientific expeditions and 12 scientific seminars. To report in detail on the scientific, scientific-organizational-publishing activities of the Shirak Center for Armenological Studies, Facebook page and bilingual website on the Internet were launched: /www.shirakcenter.sci.am/

Director of Shirak Center for Armenological Studies: A. Hayrapetyan

Scientific Secretary: A. Akopov

3. The results obtained with thematic financing in 2020

In 2018-2020 two topics were successfully implemented in the center by the competition of the Science Committee of the Ministry of Education, Science and Culture of the Republic of Armenia "Scientific Research Assistance Program Implemented in the Scientific Organizations of Shirak Region 2018":

a. In the second year of the "Demographic Processes in Alexandropol Province in the First Twentieth Century of the 20th Century" funded research project, a combination of newly discovered archival documents, scientific literature and periodical press releases studied in 1918-1920. Historical and demographic facts and information on the history of the province of Alexandropol to complete the history of the province in 1900-1920. socio-political, especially ethno-demographic as complete a picture as possible. Special attention was paid to 1918 և 1920. The fate of the population of the province of Alexan-Drapol during the Turkish occupation, the democratic and economic policy of the Turkish authorities here. During the implementation of the topic, 14 scientific articles were published in the scientific journals of the Republic of Armenia abroad, a comprehensive collection of articles and materials was prepared and submitted to the reader's judgment.

b. "1918-1921. Realities in the Context of the Historical Memory of the Population of Shirak" within the framework of the thematic funding program. Memoirs of Turkish rule in 1918 and 1921 preserved among the population. In each village, in addition to the recordings, a record of specific locations related to the topic was recorded. During the implementation of the topic, 3 scientific articles were published. A collection of oral histories, archival materials, professional literature and other sources is being prepared for publication in "1918-1921. Realities in the Context of the Historical Memory of the Population of Shirak "with the caption.

Director of Shirak Center for Armenological Studies: A. Hayrapetyan

Scientific Secretary: A. Akopov